I-380

№ 1 ՅՈՒՆՈՒԱՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

Ձիւնի տակին:
Նոր տարւայ երազներ (պատկեր)։
Իմ Վահակին (օրօր)—Աթ. Խնկոյեանց։
Տէրունական ընտանիք (պատկեր Ռաֆայէլի)։
Բարի կինը (Ֆրանս.) փոխադր. Լևոն Մ.-Աղ.։
«Հայր մեր» (պատկեր)։
Աղքատի վիշտը (ոտանաւոր) Կ. Կ. Մելիք-Շահնազարեան։
Կոկորդիլոսները (Եգիպտական զրոյց) Աթ. Խնկոյեանց։
Արջն ու աղուէսը (առակ) Հասօ։
Քուռը գրկախառնւում է Մայր Արաքսի հետ (պատկեր)։
Ծաղիկների զգայնականութիւնը Կ. Կ. Մ.-Շահնազարեան։
Ձմեռը կանչին (Ղ. Աղայեանի Սառնամանիքից—
Նախաբան և շարունակ. (ոտանաւոր) Սէյրի։
Բնութեան կեանքից.
Բոյսերի ձմեռուայ քունը. Զ. Տ. Գ.
Երկու տօնածառ (փոխադր.) Արշակ քահանայ.

Այլ և այլք:

Ամերիկական Թանաքաման։ Գլխարկներ և հովանոցներ թղթից։ Բնակիչների թիւը երկրագնդիս վրայ։ Պետութիւնների բնակիչների թիւը։

Զւարճալիք:

Կարնեցլների հանելուկներից։
Անեկդոտ.։ Թւերի աշխարհից

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ցաւում ենք, որ միայն Աղբիւր ստացող մեր բաժանորդներին անկարող ենք միուև է պայմանով ուղարկել Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Վեհափառ Հայրիկը Օշականում եւ չնաշխարհիկ պրէմիաները, որ ստանում են բացառապէս Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով գրւող մեր բաժանորդները։ Ս. Էջմիածինը կարող են Աղբիւրի բաժանորդները ստանալ, ուղարկելով 1 ր.—50 կ. փոխարէն մէկ ռուբլի։

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար

№ 1

XXII ՏԱՐԻ — Յ Ո Ւ Ն Ի Ա Ր — 1904 Թ.

Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս»
Тип. «ГЕРМЕСЪ» С. Назарьянца. Михайл. пр. № 81.
Թ Ի Ֆ Լ Ի Զ 1904

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Января 1904 г.

Ամբողջ ձմեռը լուռ պառկած ձիւնի տակին, բողբոջում էինք, արձա-կում ծիլեր, կազդուրում մեր կեանքի թելեր:

Նոր տարւայ երազներ

ԻՄ ՎԱՀԻԿԻՆ

(Նոր տարւայ առթիւ)։

Ձարըդ տանեմ, ա՛զիզ բալա՛,
Մէկ չեզւիդ տո՛ւր, մէկ բըլբլա՛
Խաւար օրս լուսացրո՛ւ,
Կոտրած սիրտս սաղացրո՛ւ:
Դու իմ արեւ—սրտիս սունը
Աչքիս քունը—հոգուս տունը.
Ոսկի արծաթ ես ի՞նչ կանեմ.—
Երբ քեզ նման գուման ունեմ:
Գուման Աստուած—գուման բաշէս
Կը թեթեւնամ սեւ դարդերէս:
Բաշիս համար ես զառ շինեմ—
Եօթը տարի ես պաս պահեմ—
Եօթն օտարի սիրտը շահեմ—

Որ բօյ քաշի, բօյով չինի—
Կտրող-կարող, ճակտով չինի.
Ամեն աչքի քաղցր բւայ—
Դուշման մարդի հախիցը գայ:
Բալիս համար ես ծով չինեմ—
Իմ ձուկ-բալէնի ծոցիս պահեմ.
Գնամ ու գամ օրօր ասեմ—
Ծով դարդերս բալիս պատմեմ:
Պատմեմ բալիս այս աշխարհէնի,
Այս աշխարհէնի՝ մարդէնի, քարէնի.—
Սար ու ձորեր կրակն առել
Մարդը մարդին գայլ է դառել.
Մարդի սէրը սուր է եղել—
Ջերմ արիւնը ջուր է եղել—
Զօռն անզօրի բուկն է կծում—
Խիղճն է մեռել—ոյժն է գործում,
Ծառն արմատին չի չորանում
Բաղն են քանդում—բարը տանում:
Մի դուշման է բռնել սարեր
Ու տնքում են ժէռ-ժէռ սարեր:
Էրնէ՛կ երկնի աստղին, շողին...
Էրնէ՛կ փոքրիկ ձեան բիւրեղին...

Էրնե՜կ լուսնու աղօտ լոյսին,
Էրնե՜կ բոցոտ արշալոյսին—
Որ ապրում են ջինջ եւ անբիծ
Ու չը գիտեն սրտի կսկիծ,
Ջիգրի մումուռ, բաղի կարօտ
Ու չեն մեռնիլ դարդոտ-եարոտ:

Ալ. Խնկոյեանց.

Ռաֆայէլ, «Տէրունական ընտանիք»

ԲԱՐԻ ԿԻՆԸ

Մի միամիտ մարդ է լինում, անունը Օհան։

Օհանն ունենում է մի շատ պատուական կին։ Սակայն ինչ կին, այլ անգին գանձ իր ամուսնու համար։ Բայց այն էլ պէտք է ասել, որ չնայելով Օհանի միամիտ լինելուն, նա շատ լաւ էր հասկանում այդ անգին գանձի արժէքը, այսինքն իր բարի կնոջ յարգն ու պատիւը։

Մարդ ու կին ապրում էին բնակութիւններից հեռու, իրանց սեպհական ագարակում, և ապրում էին այնպէս սէրով, իրար հետ այնպէս հաշտ ու միաբան, ինչպէս կաթն ու կորեկը։

Դրանք՝ բացի ագարակից, սև-օրուայ համար յետ գցած մի փոքրիկ գումար և երկու էլ կաթնատու կով են ունենում։

Այդպիսի պայմանների մէջ ամուսինների համար կեանքը ծանր բեռ չէր, այլ կատարեալ ուրախութիւն, որ և վայելում էին՝ ապրելով անկարիք և լիովին գոհ իրանց ներկայ վիճակից։ Իսկ ապագայի

համար և հանգիստ էին. երկիւղ չունէին ո՛չ յափշտակութիւնից և ոչ որևէ բանից. չէին վախենում ո՛չ յոգնելուց, ո՛չ էլ չքաւորութիւնից, համոզուած լինելով՝ որ իրանց ծերութեան օրերը խաղաղ վերջ են ունենալու։

Մի օր երեկոյեան ճրագվառոցին ամուսինները նստած հանգիստ զրոյց էին անում, համով-հոտով խօսում օրուան անցած-դարձածի, իրանց գործերի ու ապագայ անելիքների մասին։ Կինը ասում է ամուսնուն.

—Գիտե՞ս ինչ, Օհան. ես մի լաւ բան եմ միտք արել։ Արի դու ինձ լսիր և վաղը մեր կովերից մինը տար քաղաք ծախիր։ Մեզ մի կովն էլ բաւական է, իր տուած կաթն ու իւղը մեզ հերիք կ'անէ. աւելին ինչներիս է պէտք։ Մենք երեխաներ չունենք, էլ ինչո՞ւ իզուր աւելորդ չարչարուենք. այլ աւելի լաւ է խնայենք մեր բազուկները, որոնք արդէն սկսել են ուժից ընկնիլ—ծերանալ։ Ի հարկէ որ քիչ աշխատելը և լաւ չէ, բայց ինչքան չլինի, տուն է, ագարակ է. ուրեմն դու քեզ համար ուրիշ յարմար զբաղմունք էլ կարող ես գտնել։ Ի՞նչ կ'ասես, ա՛ մարդ, լաւ չե՞մ ասում։

—Ա՛ կնիկ, դու երբևիցէ վատ բան ասել ե՞ս, որ հիմա ասես։ Դու որ կաս, է՛, իսկ և իսկ խելքի բուն ես, խելքի բո՜ւն, պատասխանում է Օհանը։

Միւս օրը վաղ-վաղ, դեռ լոյսը չբացուած, վեր է կենում Օհանը և կովն առաջն անում ու քաղաքի

ճամբան բռնում։ Համնելով քաղաք, այդտեղ իմանում է, որ այդ օրը վաճառքի օր չէ։

«Է՛ ինչ արած, ինչ արած. ես էլ կովը յետ կը տանեմ տուն, որտեղից բերի։ Ճանապարհ հօ աւելի երկար չի լինելու յետ դառնալիս, այլ այն է լինելու, ինչ որ գալիս»։

Օհանը այդ ասում է իր մտքում և հանգիստ սրտով, առանց վրդովուելու քաղաքից հեռանում, գնում դէպի տուն։

Մի-երկու ժամ գնալուց յետոյ հանդիպում է մի ձիավաճառի, որ ձիով գնում էր քաղաք։

«Մինչև տուն դեռ շատ կայ գնալու, իսկ օրից բաւական անց է կացել,—մտմտում է ինքնիրան Օհանը.—կովի քայլերով գնալով, դժուար թէ այսօր տեղ համնեմ։ Բացի դրանից վաղը ես այս միենոյն զբօսանքը նորից պէտք է կատարեմ, որ շատ դժուար կը լինի ինձ համար։ Բայց ինչ լաւ կը լինէր, եթէ այդ ձին իմս լինէր. կռճիս ուղղակի ալչու կը կանգնէր. ուզում եմ ասել՝ գործս կը յաջողուէր ու ես էլ կուսակալի նման ձի նստած, առք-փառք տուն կ'երթայի»։

Եւ միամիտ Օհանը կովը փոխանակում է ձիու հետ, իսկոյն հեծնում ու իր ճամբան շարունակում։ Բայց Օհանը արդէն ծեր էր, իսկ ձին ջահէլ ու աշխոյժ, այդ պատճառով նա չէր կարող երկար մնալ ձիու վրայ։ Կէս-ժամից յետոյ ստիպվում է իջնել ու ոտքով գնալ և սանձից բռնած քաշել իր ետևից։

Բայց շատ էլ հեշտ չէր այդ. ձին եղակ, այսինքն ետեւից գնալու դեռ սովոր չլինելով՝ շարունակ կանգ էր առնում ու չէր ուզում առաջ գնալ և կամ ճամբին ընկած մեծ-մեծ քարերից էր խրտնում, ծառս լինում։

«Չէ՛,—ասում է Օհանը,—խսկի լաւ չարի, որ խելօք կովս տուի այս գիժ ձիու փոխարէն»։

Օհանը իր այդ մտմտուքի միջոցին հեռուից տեսնում է ճամբի վրայ մի գիւղացի կանգնած, իսկ նրա առջև մի մեծ խոզ փոշու մէջ նստած։

«Մի հատ մեխը, որ մի բանի պէտքական է, աւելի արժէք ու գին ունի, քան շողշողուն, պէծին-պէծին տուող ադամանդը, որ ո՛չ մի բանի պէտքը չի։ Օրինակ՝ ինչի՞ս է պէտքը այս ձին, երբ ես սովորած եմ ոտքով գնալ»։

Օհանը ինքն իր հետ այդպէս խօսելով գնում է դէպի գիւղացին, մօտենում, բարև տալիս, բարև առնում և յետոյ ձին փոխանակում խոզի հետ։

Գիւղացու ուզածն էլ հէնց այդ էր. անմիջապէս հեծնում է ձին ու... հա՜յդէ։

Միամիտ Օհանը՝ գիժ ձիուց ժամ առաջ ազատուելու յուսով ուրախացած, շատ էլ ուշք չէր դարձրել խոզի վրայ, որ սաստիկ յոգնելուց նստել էր ու էլ չէր կամենում տեղից շարժուել։ Օհանը դեռ սկսում է ձայն տալ, քշքշելով, որ վերկենայ, և երբ տեսնում է թէ նա տեղից վերկենալու միտք էլ չունի, բռնում է դնչից ու քաշքշում։ Բայց այդ էլ

չի օգնում։ Յետոյ սկսում է ոտքով հրել, ձեռքով գրգել ու վերջն էլ ստիպուած փայտով բզել, սակայն, զուր աշխատանք. կենդանին տեղիցն անգամ չէր ուզում շարժուել։

Օհանը արդէն սկսել էր անհանգստանալ, երբ տեսնում է միուրիշ գիւղացու, որ մի այծ առաջն արած դէպի իրան էր գալիս։

«Այ, իմ ուզածը հէնց այդ է.—բացականչում է Օհանը.—աւելի լաւ է որ մարդ այնպէս ուրախ, այնպէս կայտառ այծ ունենայ, քան այսպէս խոզը, այս թանձրամիտ անասունը»։

Եւ Օհանը իսկոյն, այլևս առանց երկար-բարակ մտածելու, խոզը տալիս է և փոխարէնը այծն առնում։

Մօտ կէս-ժամ ամեն բան լաւ է գնում։ Բայց երբ մարդ այլևս քսան տարեկան չէ, այլ ծեր, նա չուտ է յոգնում, մանաւանդ երբ ստիպուած է լինում այծի ետևից մին դէս գնալ, մին դէն վազել և կամ ժայռերի վրայ բարձրանալ, մագլցել՝ նրան յետ ածելու համար։ Եւ հէնց պատճառն այդ էր, որ երբ Օհանը հեռուից նկատում է մի հովիւ՝ հօտն արածացնելիս, իսկոյն գնում է մօտը, այծը տալիս նրան և փոխարէնը մի մաքի առնում ու իր ճամբան շարունակում։

Մաքին սկզբում բոլորովին հանգիստ էր, կամակորութիւններ էլ չէր անում. բայց բոնի հեռացրած լինելով իր քոյրերից ու միւս հարազատներից, նրանց

կարօտը քաշելով՝ սկսում է մայել և այնքան է մայում, որ Օհանը այլևս տանել անկարող լինելով, բացականչում է.

«Յիմար անասուն, խօմ գլուխս տարար։ Միտքդ այն է, որ ինչ գնով էլ ուզում է լինի, քեզանից էլ ազատուեմ, էլի՞։

—Ուրեմն ձեռքդ տուր, ամնահէր, թէ կամենում ես,—ասում է մի գիւղացի, որ այդ միջոցին այնտեղից անցնելիս լսել էր Օհանի ասածը։—Ահա՛ վերցրու այս գէր սագը. սա աւելի լաւ է, քան այդ յիմար ոչխարը, որ միայն մայել գիտէ։

—Լա՛ւ, պատասխանում է Օհանը և մաքին տալիս է ու սագն առնում։

Բայց սագը գրկած տանելը այնքան էլ հեշտ չէր, որովհետև նա ոչխարի նման միայն դատարկ չէր մայում, այլ ուզում էր որևէ կերպով անպատճառ ազատուել. ուստի շարունակ ու անդադար աշխատում էր դուրս պրծնել Օհանի գրկից։ Իսկ երբ Օհանը ուզում էր ընկճել, որ հանգիստ մնայ, նա պաշտպանվում էր և՛ կտուցով, և՛ թաթերով, և՛ թևերով։

—Փրո՜հ,—բացականչում է Օհանը,—սա իր գժութիւնով ամենքին էլ տուաւ-անցաւ։ Չէ՛, ախպէր, սրան պահել չի կարելի. լաւն այն է սրանից էլ ազատուեմ, և քանի շուտ, այնքան լաւ։

Եւ քիչ գնալուց յետոյ հէնց առաջին հանդիպած ագարակում սագը փոխանակում է աքաղաղի հետ։

Այլևս գանգատուելու պատճառ չունենալով՝ Օհանը

այս անգամ զոհ է մնում։ Բայց օրը արդէն մթնելու վրայ էր, իսկ մինչև տուն դեռ բաւական ճանապարհ կար գնալու։ Արշալուսից առաջ դուրս եկած լինելով տանից, նա բերանը բան չէր դրել, իսկ հիմա էլ գրպանում փող չունէր, որ մի տեղ մի բան ուտէր։ Քաղցից խեղճի ծնկները սկսել էին ծալուել։ Ճարը կտրուած, մի ճաշարանի տիրոջ վրայ ծախում է աքաղաղը և ստացած փողով իր բացուած ախորժակին բաւականութիւն տալիս։

«Այսօր այնքան բաները գլխովս անցնելուց յետոյ մի հատ աքաղաղը ի՞նչ բանի պէտք է ծառայէր, եթէ ես քաղցից մեռնէի։ Չէ, լաւը հէնց այն էր, որ հիմա ես արի»,—ինքնիրան հետ խօսում է Օհանը, սրբում բերանը, երեսը խաչակնքում, փառք տալիս Աստծուն, տեղից վերկենում և քայլերն ուղղում դէպի տուն։

—Բարի երեկոյ, ա՛ կնիկ, ներս մտնելով ասում է Օհանը։

—Աստծու բարին,—բարևն առնում է կինը.—դու ես, սիրելիս։ Ի՞նչպէս վերջացաւ ճանապարհորդութիւնդ։

—Ո՛չ լաւ, ո՛չ էլ վատ։ Երբ հասայ քաղաք, և առնող չգտայ, որ կովը ծախէի, որովհետև օրը վաճառքի օր չէր, ես էլ՝ փոխանակ յետ բերելու տուն և նորից տանելու, աւելի լաւ համարեցի կովը ձիու հետ փոխանակել։

—Ձիու հե՞տ,—ուրախացած ասում է կինը.—այդ

ի՜նչ լաւ բան ես մտածել։ Ուրեմն այսուհետև մենք էլ կարող ենք կառք նստած զբօսնել, կիրակի օրերը կառքով եկեղեցի գնալ, մեր բարեկամներին այցելել, ինչպէս որ անում են հարուստները, որոնք՝ սիրամարգի պէս պճնուած ու դատարկ հասկի պէս քիթները ցից արած, բարձրից են նայում մեզ վրայ, բայց որոնք ո՛չ մի կողմով լաւ չեն մեզանից և ոչ էլ որևէ բանով արժանաւոր։ Ձին ո՞ւր է։

—Ես ձին չբերի, ասում է Օհանը, այլ ճամբին նորից միտքս փոխելով՝ փոխանակեցի խոզի հետ։

—Ա՜խ, ի՜նչ լաւ, ի՜նչ լաւ։ Կեցցես դու. եթէ ես քո տեղը լինէի, ինքս էլ նոյնը կ'անէի։ Հիմա երբ մեր հարևանները մեզ այցելութեան գան, մենք կարող ենք խոզապխտով հիւրասիրել նրանց. թէ չէ ձին ի՜նչ պէտք է անէինք։ Տա՛ր, տա՛ր խոզն իր բունը։

—Ես խոզը չբերի, այլ այծի հետ փոխեցի։

—Իրա՜ւ. կեցցես դու, հաւատա, ասում է բարի կինը.—դու կատարեալ իմաստուն ես եղել։ Դու ի՜նչ էիր իմանում, թէ սիրտս վաղուց է որ այծի կաթ ու թարմ պանիր էր ուզում։ Դէ, տար, շո՛ւտ տար այծը փարախը։

—Ես այծն էլ չբերի, ասում է ամուսինը, այլ մաքիի հետ փոխեցի։

—Թէ՜ Աստուածդ կը սիրես։ Է՜, ես հօ նոր չեմ ճանաչում քեզ։ Անչափ շնորհակալ եմ, սիրելիս, ասում է կինը։ Դու էլի իմ նախկին լօթին ես։ Ես հաստատ գիտեմ, որ այդ բանը յատուկ ինձ համար ես արել.

ախր առաջուայ նման ջահէլ չեմ, որ կարողանամ այծի ետևից վազվզել։ Բացի դրանից մաքին համ կաթ կը տայ, համ էլ բուրդ։ Դէ՛, տա՛ր, մաքին տա՛ր փարախը։

—Ես մաքին էլ չբերի, այլ փոխեցի սագի հետ։

—Վա՜յ, ողորմի քո ծնողացը, ասում է բարի տանտիկինը.—մեր ինչի՞ն էր պէտքը մաքին. մինչդեռ սագը, և այն էլ քո բերածը, ի հարկէ որ լաւը կը լինի։ Ի՞նչքան ժամանակ է, հա՛, որ սրտով այդպէս մի բան էի ուզում։ Տա՛ր, շո՛ւտ տար սագը հաւաբուն։

—Ես սագն էլ չբերի, այլ ճամբին փոխեցի աքաղաղի հետ։

—Ա՜խ, այդ ի՜նչ լաւ բան ես արել դու, ա՛ մարդ. հօրդ հոգին լսի բաժին լինի։ Ուղիղն ասեմ, դու ինձանից շատ խելօք ես եղել։ Աքաղա՜ղ... Անչափ լաւ բան ես մտածել. շնորհակալ եմ։ Այսուհետև ամեն Աստծու առաւօտ վաղ-վաղ՝ միշտ ժամը չորսին, ծուղրուղու կանչելով մեզ իմաց կը տայ, որ վերկենալու ժամանակ է. ի՜նչքան քուն եղանք, այն էլ բաւական է։ Եւ մենք կը լսենք խելօք Թռչունին, իսկոյն վեր կը կենանք, կը լուացուենք, աղօթք կ'անենք ու կը սկսենք աշխատել։ Օրհնեա՜լ լինի մեր Ստեղծողը. եթէ որ մեզ կազդուրող կեանքը աւելի քաղցրացնող աշխատանքը Իր անէծքն է, հապա ի՜նչ կը լինի Իր օրհնանքը։ Շո՜ւտ, շո՛ւտ արա, տա՛ր աքաղաղը հաւաբուն։

—Բայց ես աքաղաղն էլ չբերի հետս, ասում է Օհանը։ Մութն արդէն ընկնելու վրայ էր, իսկ փորս վեց-վեց էր անում. սաստիկ քաղցածութիւնից ծընկներս ծալվում էին։ Ես էլ ստիպուած եղայ աքաղաղը ծախել ու այդ փողով մի լաւ ճաշել, առանց որի ես հիմա, ո՛վ գիտէ, մեռած լինէի։

—Այդ ի՛նչ խելօք բան ես մտածել, Օ՛հան։ Աստուած Ինքն է ներշնչել քեզ այդ միտքը. ուղիղն եմ ասում։ Դու ի՛նչ որ արել ես, լաւ ես արել։ Ախր իմ ինչի՞ն էր պէտքը աքաղաղը, եթէ դու չլինէիր։ Այն ինչ հիմա, փա՛ռք Աստծու, դու վերադարձել ես ողջ և առողջ, որի համար անչափ ուրախ եմ և երջանիկ. իսկ ուրիշ բանի էլ կարիք չունիմ։ Ա՛րի, հո՛գիս, ա՛րի այստեղ, նստի՛ր իմ կշտին և հանգստացիր, երկար ճամբից յոգնած կը լինիս, ասում է բարի կինը։

Ֆրանս. փոխադր. Լեւոն Մ.-Աղ.

Ասա «Հայր մեր, որ յերկինս ես»

ԱՂՔԱՏԻ ՎԻՃՏԸ

—

Ձմեռը եկաւ, դաշտ, սար ու ձորեր
Ճերմակ սաւանով ծածկեցին դէմքեր,
Փչում է քամին, սառել է գետին.
Ասացէ՛ք, մի ճար կը լինի՞ աղքատին:

Աղքատին սոված, ցնցոտով պատած,
Աղքատին՝ այն որ արցունքն աչքին
Տխուր, վիզը ծուռ, փողոցում կանգնած՝
Վախով մեկնում է ձեռը անցորդին:

Նրան չէ ազդում, ոչ բուք, ոչ բորան.
Ոչ սառնամանիք դաժան ձմեռուան,
Վաղուց կտրուած այս ծով աշխարհից
Անճար է մնացել, չունի մի պաշտպան:

Նա չէ նախանձում իւր շուրջը վխտող
Նեղ օր չը տեսած կեանքից գոհ մարդկան,
Նա չէ պահանջում ոսկի ու արծաթ
Ոչ շքեղ հագուստ եւ ոչ ճոխ սեղան:

Մի վիշտ է միայն կրծում նրա սիրտ,
Հիւանդ, անտէրունչ վիշտը զաւակին,
Որ տանը սոված սպասում է հօր
Ու նրա բերած մի կտոր հացին:

Փչում է քամին, սառել է գետին,
Ասաց է՛ք ,միճար կը լինի՞ աղքատին:

Կ. Կ.Մելիք-Շահնազարեան

ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐԸ

(Եգիպտական զրոյց)

—

Վաղուց, անյիշելի ժամանակներում մի բուռը եկւորներ գաղթեցին այն երկիրը, որը ոռոգւում էր Նեղոս գետով։ Եկւորներին շատ դուր եկաւ այդ գետը։ Մի առանձին հաճոյքով էին նայում նրան, նրա բարերար ջրերին, դրա համար էլ նրա ափերի վրայ շինեցին իրանց բնակարանները։

Բայց շուտով այդ գետում երևան եկան բազմաթիւ կոկորդիլոսներ և կլանեցին շատ անասուններ և մարդիկ։

Բնակիչները բարձրաձայն դիմեցին իրանց Օզիրիս աստծուն և օգնութիւն խնդրեցին։ Օզիրիսը քուրմերի բերանով պատասխանեց.

—Միթէ բաւական չէ մարդուն տուած ոյժերը և գիտակցութիւնը։ Ով որ օգնութեան է դիմում և ինքը միևնոյն ժամանակ չի ուզում կռւել թշուառութեան դէմ՝ ոչինչի չի հասնիլ, նրա խնդիրը անկատար կը մնայ։

Լսելով այսպիսի մի պատասխան՝ մարդիկ սրերով և տէգերով յարձակւեցին ահռելի հրէշների վրայ։ Ամբարտակներ և աւազաններ շինեցին։ Մի քանի օրւայ ընթացքում այնպիսի մի հսկայական գործ կատարեցին, որի համար նրանք իրանց բոլորովին անընդունակ էին համարում։ Հասկացաւ մարդը իր մեծ ոյժը և հասկանալով նրան՝ հնարեց և պատրաստեց այնպիսի գործիքներ, որոնց մասին առաջուց գաղափար անգամ չունէր։

Զարութեան դէմ մղած պատերազմը զարթեցնում և կատարելագործում է մեր մէջ քնած ոյժերը։

Բայց հրէշին վերջնականապէս հարւած տալու, վերջնակա-

նապէս դուրս խրկելու համար հնարած գործիքները դեռ բաւական չէին։ Յաջողուեց միայն կոկորդիլոսների թիւը պակասացնել, վախեցնելով հեռացնել նրանց մի առ ժամանակ։ Դրանով էլ մարդիկ բաւականացան։

Վտանգի սաստկութիւնը պակասելով, պակասում էր նոյնպէս մարդկանց կռւում ցոյց տուած արիութիւնը և տոկունութիւնը։

Այն ժամանակ նորից բազմացան կոկորդիլոսները և սկսեցին յարձակուել մարդու վրայ նախկին համարձակութեամբ. խելքահան եղած ժողովուրդը վճռեց երկրպագել կոկորդիլոսին, ինչպէս Աստուծոյ և հայցել նրա ողորմութիւնը։ Մինչև անգամ մարդկային զոհեր էր բերում կոկորդիլոսին։

Կոկորդիլոսների զօրութիւնը չը տեսնուած չափով աճեց, ժողովուրդն էլ մատնուեց մի տեսակ բթամտութեան և անգործունէութեան։

—

Այն ժամանակ Օզիրիսը վճռեց օգնել թշուառ ժողովրդին և հրամայեց քուրմերին, որ կանչեն նրան և ոգևորեն նոր կռւի համար։

Եւ նորից Նեղոսի ափերը թնդացին մարտնչողների աղաղակներով, նորից Նեղոսի ջուրը ներկուեց հրէշների արիւնով։ Օզիրիսը օգնութեան ուղարկեց Խնևմոնա փոքրիկ գազանին, որը կատւից զանազանւում էր միմիայն իր ճարպիկութեամբ և արագաշարժութեամբ։

—Նայեցէ՛ք գոչեց քուրմը ժողովրդին. Օզիրիսը ձեզ օգնում է։

—Դու մեզ վրայ ծիծաղում ես։ Ի՞նչ օգնութիւն կարելի է սպասել այդպիսի մի փոքրիկ գազանից. պատասխանեցին պատերազմողները։

Սակայն կոկորդիլոսները հետզհետէ քչացան։ Զարմանքով էին նայում մարդիկ թէ ինչպէս այդ փոքրիկ գազանը որոնում-գտնում և ապա փչացնում էր կոկորդիլոսների ձուերը։

—Տեսնո՞ւմ էք, նկատեց քուրմը, ինչ խրատ է տալիս Օզիրիսը։ Եթէ կամենում էք չարին յաղթել, նախ պէտք է սովորէք գտնել նրան և ոչնչացնել հէնց իր սաղմի մէջ։

Ար. Խնկոյեանց



ԱՐՋՆ ՈՒ ԱՂՒԷՍԸ

(Ա ռ ա կ)

Միասին Արջը, Աղւէսը խորամանկ՝
Խօսք տւին իրար ու քոյրեր դարձան.
Բոյն շինեցին միասին,
Նոյն բնի միջին՝
Ձագեր հանեցին:
Արջն ուտելիքի հոգսն առաւ վրան
Ու գնաց անտառ՝ գտնելու մի բան,
Աղւէսը մնաց բնին պահապան.
Արջի քոթոթներն թխլիկ, թխորակ,
Աղւէսի ձագերն սիրուն դեղնորակ
Քողողում էին իրար համարձակ:
Քոթոթներին մայիլ-մայիլ
Չար Աղւէսը սկսեց նայիլ:
Վրա պրծաւ յանկարծ, մէկին փարատեց,
Մորթը պարտկեց, հետքը կորցրեց,
Բերանը սրբեց՝ բնի դռան նստեց:
Իրիկնապահին Արջն երբ տուն դարձաւ
Լաց, սուգ ու շիւան Աղւէսն սկսաւ.
«Աղւէ՛ս, քուրի՛կ, ի՞նչ է պատահել,
Ինչո՞ւ ես այդպէս սգաւոր դառել».
Ասաց խեղճ Արջը եւ մրթմրթալով՝
Աղւէսի կողքին նստեց տնքալով:
—«Ի՛նչ է պատահել. դեռ հարցնո՞ւմ ես.
Քանդւել է տունս, կիսամեռ եմ ես.

Աղբիւր գնացի խմելու քիչ ջուր
Ոտս կոտրուէ՞ր, ուշացայ իզուր.
Տուն վերադարձայ, ի՛նչ տեսնեմ,
Ձագերից մէկը, ի՛նչպէս, չը գիտեմ,
Հեռանում է բնից, ա՜խ, դէ հասկացիր
Էլ ի՞նչ ես պատմեմ.
Եւ յանկարծ մի գայլ
Առանց այլ եւ այլ՝
Խեղճ ձագուկիս վերայ է պրծնում,
Անողորմաբար փախցնում լափում»:
Հաւատաց Արջը, եղաւ ողբակից,
Զգաց դառն ցաւ եւ սրտի կսկիծ՝
Լինելով զրկուած իւր քոթոթիկից:
Հետեւեալ օրը մեր Արջը դարձեալ
Միամիտ սրտով գնաց դէպ անտառ՝
Անօրէն գայլին պատժելու համար:
Արեւը բարձրացաւ,
Օրը տաքացաւ,
Սկսեց նորից ձագերի խաղը,
Եւ քոթոթիկն էր ամենից չաղը:
Աղուէսը նայում է ձագերի խաղին
Աչքը ընկնում է ամենից չաղին:
Աչքերը վառեցին, սիրտը դող ընկաւ,
Խեղճ քոթոթիկին նա վրայ պրծաւ,
Փարատեց, կերաւ,
Բերանը սրբեց, հանգիստ քուն մտաւ:
Իրիկնապահին, ինքը, Աղուէսը
Վազեց անտառը, անցնելով կէսը.
Արջին երբ տեսաւ՝ բարձրացրեց կական,
Վայր ընկաւ գետին, մնաց անկենդան:
Միամիտ Արջուկը քունքը տրորեց,
Ջուր բերեց, ճակտին, երեսին շփեց:
Սուտ սատկ տւող Աղուէսը երբ ուշքի եկաւ
Դառնապէս լալով պատմել սկսաւ:
«Գայլը լափել է ձագերից մէկին,
Սեւ օր սեւ արեւ բերել իմ գլխին»:
Արջի աչքերը մթնեցին իսկոյն
Շունչը բռնուեց, թռաւ երեսի գոյն.
Երբ կարող եղաւ բերան բաց անել
Առաջին խօսքը եղաւ հարցնել.
«Ի՞մը թէ քոնն է լիրբ գայլը լափել»:

Խորամանկ Աղուէսը իրան չը կորցրեց
Թաւ պոչը շարժեց՝ պատասխան տուեց.
«Ի՞նչ հարկաւոր է «իմն ու քոնն» հարցնել
Այդ «իմն ու քոնն» է մեր տունը քանդել.
Երբ «իմն ու քոնը» մէջ տեղ է ընկել՝
Պէտք է հեռանանք՝
Ջոկ տուն տեղ դառնանք»:

Համօ

Քուռը գրկախառնւում է Մայր Արաքսի հետ.



XXVI
ԾԱՂԻԿՆԵՐԻ ԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Յովակիմը և Աննիկը մօտեցան այն կենդանի չափարին, որը «Աննիկի այգին» բաժանում էր ընդհանուր ծառաստանից։ Այդ կենդանի չափարը կոծոխուրի թփերից էր, որի մոխրագոյն բնափայտը ծածկուած էր փշերով, որոնց տակից շիւեր էին դուրս եկել խիտ տերևներով ու դեղնաւուն ծաղիկների գեղեցիկ ճիթերով։

Աննիկը կոծոխուրի թթւաշ պտուղը շատ էր սիրում և յաճախ գալիս էր այդտեղ քաղելու։

Ծերունին բաճկոնակից մի երկայն գնդասեղ հանեց և Աննիկին դառնալով ասաց. «ահա՛ նայեցէ՛ք, ես զգուշութեամբ այս ծաղկի առէջքները կը ծակեմ և դուք կը տեսնէք թէ ինչպէս նա իմ հպումը կը զգայ։

Այգեպանը հազիւ թէ կոծոխուրի առէջքներին դիպաւ, նրանք շարժւեցին տեղներից մի րոպէ և ապա թէ իրենց առաջւայ դրութիւնը ընդունեցին։

—Ա՜հ, նրանց ձեռք մի տա՛ք, նրանք զգում են. կարելի է նրանց ցաւ է պատճառում. բացականչեց աղջիկը։

Պատասխանի փոխարէն Յովակիմը Աննիկին ցոյց տւեց փետրաւոր տերևներով մի բոյս։

—Ես գիտեմ այս ինչ բոյս է. ասաց Աննիկը, այս միմոզան է և բռնեց նրա տերևիկը։

Հէնց որ աղջիկը դիպաւ մատով միմոզայի փետրիկին, բոլոր տերևիկները իսկոյն իրար վրայ ծալւեցան ու հուպ եկան։

«Տեսնում էք, խեղճ, փոքրիկ բոյսը վախեցաւ, նա ուրիշ կերպ չէ կարող պաշտպանւել, բացի այն՝ որ ծածկում է իւր տերևները, ասաց Յովակիմը։

Մի քանի րոպէից յետոյ տերեւները կամաց կամաց ուղղուեցին։

—Երեւի նրանք հանգստացան, նկատեց Աննիկը, կրկին տերեւների ատամներին դիպչելով։

«Ճիշտ այդպիսի զգայականութիւն ունեն նաեւ երկու փոքրիկ բոյսեր, ճանճաբռնիկն ու ցօղակը (росянка) շարունակեց ծերունին։

—Ցօղակ... ինչպիսի տարօրինակ անուն. զարմացաւ Աննիկը։

«Դրա համար են ցօղակ անունը տալիս, որովհետեւ նրա տերեւները միշտ ծածկուած են մի կարմիր հեղուկի գեղեցիկ կաթիլներով, որ տերեւների վրայ նստած շօշափուկները արտաթորում են իրենցից. այդ կաթիլները ցօղի նման թէ ցօղակի կարճ ծեղն են ծածկում և թէ նրա բոլորտիքը բաած ութ կոլոր բարակ թելիկներով տերեւները։

Այդ կաթիլների գոյնը շատ միջատներ է գրաւում, մանաւանդ ճանճեր, բայց հազիւ թէ այդ քաղցրասէրներից մինը նստում է ցօղակի վրայ թէ չէ, այդ հեղուկը նրա ոտներին ու թեւերին է կպչում, բռնում, իսկ շօշափուկները ամեն կողմից փաթաթւում են, տերեւին մօտեցնում սեղմում, որի երկու կէսերը արագութեամբ փակւում են մէկմէկու վրայ և այդ դրութեամբ տերեւը 5—6 օր մնում։

—Յետոյ ի՞նչ է անում այդ ճանճերին։

«Ցօղակը քիչ քիչ նրանց ուտում է։ Քանի որ տերեւները մնում են փակուած, կարմիր հեղուկը մեծ աշխատութիւն ունի ճանճի հետ, նա կամաց կամաց մարսում է, իւրացնում, ինչպէս որ կենդանու ստամոքսը մարսում է մսային կերակուրը։ Ինչպէս ցօղակը, այնպէս էլ ճանճաբռնիկն պատկանում են միջատակեր բոյսերի կարգին, շարունակեց Յովակիմը։ Մի ճանապարհորդ պատմում էր թէ տաք երկրներում մարդակեր բոյս է տեսել։

—Մարդակե՞ր։

«Այո՛, ձեզ երեւակայեցէք այնպիսի մի բոյս, որը կարող է մարդ ուտել։

—Տէր Աստուած, ինչ սարսափ. ես կարծում էի այդ հէքիաթ է, յուզուած ասաց Աննիկը։

«Ո՛չ, հէքիաթ չէ։ Ճանապարհորդը հաւատացնում է, որ անձամբ տեսել է և ներկայ է եղել այդ հրէշ ծառի սարսափելի

գործողութեանը։ Այդ ծառը բուսնում է Հնդկական Ովկիանոսի ամենամեծ կղզիներից մէկի մէջ, այն է՝ Մադագասկարում։

Այդ ծառի բարձրութիւնը 6—8 արշինի է հասնում։ Ծառի կատարից կախ են ընկած մինչև գետինը ութ շատ հաստ, երկար ու անշարժ տերևներ, որոնց շրջապատը մէկ ու կէս արշին է։ Ծառի կատարը մի մեծ ու խոր ափսէի տեսք ունի, դրա մէջ մի թափանցիկ, մեղրի պէս թանձր ու կպչող հիւթ է բովանդակւում, որը քնացնող յատկութիւն ունի։

Ափսէի շուրջը ծածկուած են կանաչ, ամեն ուղղութեամբ փռուած շօշափուկներ, 2—3 արշին երկայն բարակ ու սուր ծայրերով։

Այդ արտասովոր բոյսը գտնող ճանապարհորդը պատմում է, որ տեղացիք նրան սուրբ են համարում, ուստի և մարդկային զոհեր նւիրում։

Այդ կողմերում բնակւող վայրենի ազգերը միմեանց հետ անդադար պատերազմներ են մղում և գերի բռնուածներին կամ զոհաբերութեան տանում կամ կենդանի ուտում։

Երբ որ գերիները զոհաբերութեան համար են նշանակւած, նրանց ձեռներն ու ոտները կապոտում են և մի երկու օր ամբողջ գիւղի ուղեկցութեամբ նրանց քշում են այնտեղ, ուր սրբազան ծառն է կանգնած։ Դրանք վայրենի ու պատերազմական երգերով ու պարերով, որ քանի մօտենում են սրբազան ծառին, աւելի կատաղի ու սարսափելի են դառնում, տանում են մահւան դատապարտւածներին։

Ահա և մարդակեր—ծառը երևաց։ Առաջին գերին, որ համարեա թէ դեռ մանուկ է, գեղեցիկ, թուխ, կասես բրոնզից թափած դէմքով, զարհուրանքով կանգնում է ծառի դիմաց։

Չորս կողմը կատաղի աղաղակ ու սպառնալիք է բարձրանում, օդի մէջ թունաւոր նետեր շողշողում... դժբաղդ մանուկը չը գիտէ ինչ անէ, վարանման մէջ է, բայց տեսնելով շուրջը հաւաքւած կատաղի դէմքերը, երկիւղը պատում է նրան և նա անգիտակցաբար բարձրանում է ծառի կատարը և երերւող ցօղունների մէջ տեղը նստում։

«Խմի՛ր, խմի՛ր սրբազան գաւաթից» բարձրանում են կատաղի ձայներ. «եթէ չը լսե՛ս, քեզ վրայ թունաւոր նետեր կը թափենք և

դու խելօն կըմեռնես»... Չիմանալով թէ շուրջը ինչ է կատարուած, պատանին կռանում է և հեղուկից մի քիչ խմում...

Հազիւ թէ երկու երեք կում է անում, այդ սպանիչ հեղուկը արբեցնում է, նրա մարմնովը կասես մի կրակէ ալիք անցնում, վեր է թռչում և ուղղւում, երևի ներքև ցատկելու դիտաւորութեամբ, բայց այդ վայրկենին երերող ցօղունները զօհի վրայ են ընկնում նրա գլուխն ու ձեռները ինչպէս մամուլի մէջ սեղմում, շօշափուկները անասելի արագութեամբ և ուժով բարձրանում նրա մարմնի շուրջը, իսկ այն հսկայական մինչև այժմ անշարժ ընկած տերևները կամաց կամաց բարձրանում են և այդ անբաղդի չորս կողմը պատում...

Մի քանի րոպէ սիրտ կտրատող հառաչանքներ են լսւում և ապա ամեն ինչ լռում է:

Այդ հրէշ բոյսը հաւանական է, որ այնպէս է ջարդում ու կլանում մարդուն, ինչպէս որ նրա գաճաճ ցեղակից—ցօղակը ճանճի հետ է վարւում:

Մնացած գերիներին քուրմերը զոհում են ծառի տակը և ամբոխը աղաղակներով ու հրճուանքով ցրւում է:

—Միթէ՞ այդ ճշմարիտ է. բացականչեց վրդովուած Աննիկը:

—Ես ինքս այդ բանը չեմ տեսել, բայց մի այնպիսի աղբիւրից եմ կարդացել, որին կատարեալ հաւատում եմ. պատասխանեց ծերունին:

«Ինչպէս բաղդաւոր եմ, որ այդպիսի վայրենիների մէջ չեմ ապրում, այլ մեր տանը, ձեզ ամենքի հետ, զարհուրած ասաց Աննիկը այդ պատմութիւնը լսելով:

Ն. Ն. Մելիք-Շահնազարեանց



ՁՄԵՌԸ ԿԱՆՑՆԻ

—

«Ձմեռն է, ձմեռն, սիրուն երեխէք,
Ձմեռն է եւ դուք դողում, մրսում էք.
Բայց դուք մենակ չէք, ամենքն են
մրսում,
Ամենքն էլ ձեզ պէս դողում, սարսռում։
Բայց գիտէ՞ք, արդեօք, ինչ է՞ ձմեռը,
Այդ պատկառելի համարուած ծերը:
Ո՛չ, մի՛ հարցնէք, դուք կը սարսափէք,
Երբ դրա արարքը պատմեմ ձեզ մէկ-մէկ։
Այդ անիրաւը ուր ոտք է դնում,
Առանց խղճալու մահ է տարածում։
Երեսին առած սպիտակ դիմակ,
Մեզնից ծածկում է սեւ դէմքն այլանդակ։
Շատ ժամանակ չէ, ինչ որ դա եկաւ,
Եւ դուք լաւ տեսաք, թէ ինչեր արաւ.
Դրա երկիւղից ջուրը քար կտրեց,
Քչքչան առուն լուեց, պապանձուեց,
Դալար բոյսերը սառան, փէտացան,
Նախշուն հաւքերը թռան, հեռացան.
Բայց էլի շատին իր ճանկը ձգեց,
Բուք-բորան արաւ, բոլորին խեղդեց,
Սիրուն վարդենու թուփը չորցրեց,
Սոխակի լեզուն տակիցը կտրեց...

Հապա՞, երեխա՛ք, մեր հովիտ ու դաշտ
Տնքում են այժմ ձմրան սառցի տակ։
Շղթայւած ծանր, ամուր կապանքով,
Մ՚ռնչում են ցաւից զետակ ու լճակ։
Յիշում է՞ք, ինչպէս անմեղ երեխայք
Հրապուրւած նրա կեղծ ժպիտներով,
Ուրախ աղմուկով եւ սղղաններով
Դուրս եկան կոկւած զետնին սղղալու.
Եւ այնքա՜ն անմեղ, սիրուն երեխայք
Բոլորն էլ կորան նորա դաւաճան
Ձեռներով փռւած սառցէ փոսերում։
Այո՛, յիշում էք. եւ այժմ էլ տխուր,
Մէկդի շպրտած ձեր սղղանները,
Նայում էք անթարթ վերեւ—արեւին,
Փոքրիկ ծնօտները դրած ափերին։
Ա՛յո, կարդում եմ ես ձեր աչքերում՝
Բոլորդ էլ տաքուկ արեւն էք ուզում,
Որ գայ հալածէ անողորմ, անխիղճ
Այդ ցուրտ հրէշին մեր դրան շէմքից։
Եւ կը գայ անշուշտ, արեւը կը գայ,
Ձմրան վզին մտրակով կը տայ,
—Դէ գնա՛ կորի՛ր, դու անսիրտ հրէշ.
—Քանի՞ չար գործես այսպէս անպատիժ.
Լռած, պապանձւած քչքչան առուն
Նորից կը հնչի անուշ խոխոջիւն,
Սառած, փէտացած դալար բոյսերը
Կը պճնեն նորից մեր հովիտները,
Եւ հեռու փախած նախշուն հաւքերը
Կը գան կը լցնեն մեր ձորձորները:
Ջուրը կը վազի ջրաղացները
Ուրախ աղմուկով կը տայ մեզ ալիւր,
Ձիւն էլ չի լինի, ճանապարհները
Ազատ եւ անկապ՝ անցու դարձով լի,
Թէ մարդ, թէ տաւար՝ ամենքն հաւասար
Կ՚ապրեն. լիութեամբ՝ մահը մոռացած։

Գարո՜ւն, ո՜ գարո՛ւն,
Քեզ են սպասում
Մեր մանուկները
Եւ մեր սրտերը։
Մանկո՜ւնք, ո՜վ մանկո՛ւնք,
Դուք հաւատացէք
Անխախտ հաւատով.
Սրտե՜ր, ո՜վ սրտեր,
Դուք միշտ յուսացէք
Անպարտ սիրով.
Միշտ հաւատացէք
Եւ ջերմ յուսացէք,
Որ մեզ կաշկանդող,
Մեր կեանքն սպառող
Ձմեռը կանցնի,
Անհետ կը կորչի.
Որ մեր կենսատու
Գարունը կըգայ,
Ու մեզ լուսատու
Արեւ կը շողայ.
Որ մեր սրտերը
Եւ մեր յոյսերը.
Ազատուած ցրտից,
Կը խայտան անվիշտ...

Սէյրի.

ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Բոյսերի ձմեռուայ քունը։

—

Շուտով կը գայ պայծառ գարունը և կը կենդանացնէ բնութիւնը։ Սկզբից երկչոտութեամբ դուրս կը գայ կանաչ խոտը, ծառերի ճիւղերի վրայ կուռչին բողբոջները. Նրանցից դուրս կը գան թարմ տերևներ, և անտառը նորից կազմէ իր գալարագեղ ու թաւախիտ պաճուճանքով, իսկ երկրիս վրայ կը սփռւի հազարաւոր խայտաբղէտ, նախշուն ծաղիկներ. մեղուներն ու ճանճերը կըսկսեն տզզալ. բզէզները կըսողան, թռչունները կըճռւողեն, իսկ գազանները կըսկսեն իշխանաբար կարգադրութիւններ անել իրանց գալարախիտ թագաւորութեան մէջ։

Իսկ հիմա, ցուրտ ձմրան ժամանակ, ամեն բան քնած է. քնած են կենդանիները, քնած են ծառերն ու խոտերը. քնած՝ սպասում են գարնան արևի առաջին գուրգուրանքին, որ զարթնեն և նոր ուժերով սկսեն իրանց գոյութեան կռիւը։

Դուք արդէն իմ առաջին զրոյցից («Աղբիւր» 1903 թ., № 1) գիտէք կենդանիների ձմեռւայ թմրութեան մասին։ Բայց ինչ բան է բոյսերի քունը։

Մի զարմանաք. նա շատ նման է կենդանիների թմրութեան։ Վերցնենք, օրինակ, ճահճային կենդանիներին ու բոյսերին։

Հէնց որ ցրտերն սկսւում են, գորտերը, ջրային բզէզները, տրիտոնները, զանազան տեսակի խեցգետինները իջնում են

իրանց հաւուզի (աւազանի) յատակը և ծածկւելով տիղմի մէջ՝ քնում են ձմեռւայ քնով։

Ջրային բոյսերը, երբ ցրտերը մօտենում են, նոյնպէս պատրաստութիւններ են տեսնում ձմեռելու համար։

Օրինակ. Ժաղլա անունով մի ջրային բոյս կայ՝ երկար ցօղունով և խուճուճիկ տերևներով։ Ցօղունը միշտ ջրի տակն է լինում և միայն գագաթն է ջրից դուրս գալիս։

Աշնան վերջը ցօղունի ծայրին մի թարմ ընձիւղ է դուրս գալիս, որը մեծանում և աստիճանաբար բաժանւում է գլխաւոր ցօղունից։ Այդ ընձիւղում հաւաքւում են բոյսի բոլոր կենսական հիւթերը։ Երբ ընձիւղը լիովին աճում, զարգանում է, այն ժամանակ կտրւում, պոկւում է ցօղունից. այդ ժամանակ նպաստում է և քամին։

Ապա հիւթերով լցւած, ուրեմն և ծանրացած ընձիւղը իջնում է յատակը, ուր ծածկւելով տղմի մէջ՝ նա փրկւում է մահաշունչ ցրտից և քնում է մինչև գարուն, երբ սառուցը կը հալի, և ջուրը կըտաքանայ։ Գարնանը Ժաղլայի ընձիւղը տերևներ է տալիս, աճում և նորից հասնում է ջրի մակերևոյթին։

Մի ուրիշ հետաքրքրական ջրային բոյս էլ կայ, որի տերևները կլոր են, և գեղեցիկ ծաղկապսակը երեք թերթիկներից բաղկացած։ Այդ բոյսը չի կպչում մի տեղից, ինչպէս Ժաղլան, այլ ազատ լողում է՝ կախելով ջրի մէջ իր թելանման արմատները։ Աշնանը այդ արմատների վրայ ընձիւղներ են բսնում, որոնց ծայրերին դուրս են գալիս մատաղ բողբոջներ։ Ահա այդ բողբոջներին է տալիս բոյսը իր ցօղունի և տերևների բոլոր կենսական հիւթերը։ Հասնելուց յետոյ բողբոջները բաժանւում են բոյսից և իջնում են յատակի տղմի մէջ։ Բայց այնպէս պառկում են յատակի վրա դարձեալ մինչև գարուն, կարծես ջրային բզէզներ լինեն:

Ջրային շուշանները, սովորաբար, լողում են մակերևոյթի վրայ, բայց ցրտերի սկսւելու ժամանակ, ամբողջովին իջնում են յատակը, ուր մնում են մինչև գարուն։

Այդպէս. ուրեմն, բնութիւնը անպաշտպան ծաղիկների համար էլ միջոցներ է հնարել դիմադրելու ձմեռւայ ցրտերին, որ նրանք չոչնչանան դառնաշունչ սառնամանիքից։ Կոճղաբոյս

(սոխուկներ ունեցող, սոխանման) բոյսերը, ինչպէս, օրինակ, կակաչն ու նարգիզը, իրանց կենսական հիւթերը հաւաքում են սոխուկների մէջ, որոնք ցրտից պաշտպանւում են հողի մէջ, ինչպէս կենդանիները՝ իրանց ստորերկրեայ բների մէջ։ Գարունը արթնացնում է նրանց ձմեռուայ քնից, և նրանք գետնի տակից դուրս են մղում իրանց տերևները։

Թփերն ու ծառերը իրանց հիւթերը աշնանը հաւաքում են բնի և արմատների մէջ, ուրեմն ցրտից նոյնպէս թաքցնում են նրանց տաք բներում, այն է՝ գետնի կամ իրանց հաստ կեղևի տակ։ Ահա ինչի աշնանը դեղնում և թափւում են տերևները. նրանք մեռնում են, որովհետև նրանցում այլ ևս կենսական ոյժ չի մնում։ Ծառը նրանց վայր է ձգում, ինչպէս օձը՝ իր հին կաշին։

Ուրեմն բոյսի քունը կայանում է նրանում, որ նրա կենսական հիւթերը, որոնք սովորաբար շարժւում են ամբողջ բոյսի բոլոր մասերում, աշնանը հաւաքւում են բոյսի այն մասերում, որոնք ցրտից աւելի են պաշտպանւած և ապահով են, և այնտեղ համարեա անշարժ մնում են մինչև գարուն, երբ տաքանալով՝ նրանք նորից տարածւում են բոյսի բոլոր մասերում և նրանց կեանք ու թարմութիւն են ներշնչում։ Եթէ բոյսերը այսպէս չյարմարուէին կեանքի արտաքին պայմաններին, նրանք վաղուց անհետացած կլինէին՝ մահաշունչ, դաժան ձմեռուայ շնորհիւ։

Մարդիկ օգտւում են բոյսերի ձմեռուայ քնից։ Նրանք աշնանը ցանքս են անում. աշնանացանը ծիլ է տալիս և մի քիչ բարձրանում է մինչև ցրտերի սկսւելը։ Ապա սկսւում է ձմեռը. արտերը ծածկւում են ձիւնով, որի տակ հացաբոյսերը մնում են մինչև գարուն։ Աշնանացանը աւելի լաւ և առատ հունձ է տալիս՝ քան գարնանացանը. դրա պատճառն այն է, որ աշնանացանը, մինչև ցրտերի սկսւելը, բաւական աճում և ուժեր է հաւաքում, որոնք ձմեռը թաքնւում են հացաբոյսերի արմատներում, գետնի տակ։ Գարնանը, աճման ժամանակ, նրանք ուժի մեծ պաշար են ունենում. այդ պատճառով էլ նրանց հունձը աւելի առատ է լինում՝ քան գարնան ցանքսերի հունձը։

Շուտով կըգայ գարունը, և ամբողջ բնութիւնը կարթնա-

-նայ ձմեռւայ քնից։ Ո՞վ կարթնացնէ։ Ի հարկէ, գարնանային արեգակը։ Ինչպէս առասպելական իշխանազն, ներս է մտնում նա ձմեռւայ քնաթաթախ թագաւորութեան մէջ, դուրս է վռնտում ալեոր կախարդուհուն, համբուրում է իր գգւող, շոյող ճառագայթներով գեղեցկուհի բնութեանը, և արթնանում է նա, ինչպէս առասպելական թագուհի. արթնանում է թմրած թագաւորութիւնը, և կեանքը սկսում է եռալ ամեն կողմ…

Ջ. Տ.-Գ.

ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ.

Բ. Քաղաքի մեծ հրապարակում մի գեղեցիկ բնակարանի մէջ ապրում էր ծերունի Նախագահը։ Նա քաղաքի ամենածեր և առաջնակարգ մարդն էր. իր ամբողջ կեանքի ընթացքում ոչ մի մարդու ո՛չ վնաս էր տուել, ո՛չ պատժել և ոչ էլ չարչարել։

Նա ամեն օր միայն տեսնւում և գործ ունէր այն մարդկանց հետ, որոնք իւր իշխանութեան տակ ծառայում էին. իսկ քաղաքի մնացած բնակիչների հետ համարեա ոչ մի յարաբերութիւն չունէր. ո՛չ ինքն էր գնում նոցա տները ո՛չ էլ նոքա էին գալիս սրա մօտ. Նա բոլորովին առանձնացած կեանք էր վարում։ Նախագահի տան տնտեսական գործը կատարում էր մի պառաւ կին, իսկ ընդհանուր ծառայութեան համար ունէր մի ծեր դանդաղ ծառայ։

Քաղաքացիներից շատերն իրանց Նախագահի մասին շատ քիչ տեղեկութիւններ ունէին։ Նրա կինը տարիներ առաջ մեռել և թողել էր մի աղջիկ, որին հայրը չափազանց սիրում էր։ Աղջիկն ամուսնանալուց յետոյ կարճ ժամանակ ապրեց իր մարդու հետ. ամուսինը մեռաւ, իսկ երեք տարուց յետոյ էլ ինքը մեռաւ և թողեց մի փոքրիկ մանուկ Էմիլ անունով, որին մեծ պապը տարաւ մօտը և որդեգրեց։ Երբ առաջին ծանր վշտի րոպէները անցան, Նախագահը իր Թոռ Էմիլին յանձնեց պառաւ տնտեսուհուն և այնուհետև մոռացաւ նրա

մասին մտածել որովհետև իբրև Նախագահ զբաղուած էր աւելի մեծ գործերով։ Որբ Էմիլը մեծացաւ տխուր միայնութեան մէջ. նա ոչ ունէր խաղընկեր և ոչ էլ մի սրտացաւ ազգական, որ մտածէր նրա կրթութեան կամ դաստիարակութեան մասին։

Մի օր պատահմամբ ծերունի Նախագահը մտաւ այն սենեակը որտեղ փոքրիկ Էմիլը մենակ խաղում էր. խիստ և միանգամայն լուրջ պապը տեսնելով իւր Թոռ Էմիլին խաղալիս, նայեց նրա վերայ, հառաչեց, խղճաց և մօտենալով երեխային սկսեց նրա հետ խաղալ։ Պառաւ տնտեսուհին շատ զարմացաւ Էմիլի պապի այդ յանկարծական փոփոխութեան վերայ։ Այնուհետև ծերունի Նախագահը հրամայեց պառաւ տնտեսուհուն, որ ամեն օր ճաշից յետոյ փոքրիկ Էմիլին իր սենեակը ուղարկի։

Այդ օրւանից սկսած Էմիլը շարունակ գնում էր իր մեծ պապի սենեակը և նրա հետ խաղալով ուրախ ժամանակ անցկացնում։ Ծերունի Նախագահը շատ անգամ իւր գործերը թողած, զբաղւում էր Էմիլի հետ, նրան ուրախացնում, մխիթարում էր։ Միևնոյն Բ. քաղաքի մի նեղ և ետ ընկած փողոցում, իր աղքատիկ բնակարանում բնակւում էր մի ուրիշ միայնակեաց մարդ՝ Թովմաս անունով։ Թովմասը սրանից տասնեչորս տարի առաջ մի բարի մարդու երաշխաւորութեամբ և առաջարկութեամբ ընդունեց վերոյիշեալ Նախագահի դիւանատան մէջ գրագրի օգնականի պաշտոնով։ Եւ ահա այսօր նա բոլորած իր վաթսուն ամեայ հասակը, դարձեալ առանց տրտնջալու նստել էր իւր գրական մաշուած աթոռի վերայ և համեստութեամբ իր պարտքը կատարում։ Ոչ ոք մի րոպէ անգամ չէր ցանկանում իրան նեղութիւն տալ մտածելու այդ խաղաղ, հանգիստ և աշխատասէր մարդու մասին և նրա աշխատանքի ձևը բարեփոխել և ռոճիկը աւելացնել։ Ինքը ծերունի Թովմասը շատ գոհ էր իր վիճակից և ոչ մի վարկեան անգամ Թոյլ չէր տալիս մտածելու իր պաշտօնի փոփոխութեան վրայ։ Եւ այսպէս նա համարեա մօտ քառասուն և հինգ տարի շարունակ գրագրի օգնականի պաշտօն էր կատարում և ամսական 45 մարկ ռոճիկ էր ստանում (մեր հաշւով մօտաւորապէս 21 ռուբլի). այդ պատճառով խեղճ Թովմասը փող չունէր։

Նա մօտաւորապէս քսան տարի առաջ մի աղքատ բայց ջերմեռանդ, առաքինի և աշխատասէր աղջկայ հետ ամուսնացաւ և յոյս ունէր, որ ամուսնանալուց յետոյ շուտով իր դրութիւնը կըլաւանայ։ Երիտասարդ կինը շատ աշխատասէր և գործունեայ էր. իւր ձեռքի աշխատանքի շնորհիւ ամեն օր մի քանի կոպէկ աշխատելով՝ իւր ապրուստի վերայ էր գործադրում։ Սոքա որդի չունէին. տասը տարի շարունակ երկու ամուսինները երջանիկ և բաղդաւոր ապրեցին։ Մեռաւ Թովմասի կինը և նա մնաց բոլորովին մենակ. այդ օրւանից նրա տունը կառավարում էր մի աղքատ կին, որը ծանրաբեռնուած էր մեծ ընտանիքով

և նրա երկու զաւակները մեծանում էին առանց ծնողական խնամքի և կրթութեան։ Բարի Թովմասը շատ անգամ մտածելով իւր ազախնի թշուառ երեխաների վերայ, տխրում էր. ուստի նա սկսեց պարապել իր ազախնի երկու երեխաների հետ այն ազատ ժամերին, երբ ծառայութիւնից յետոյ տուն էր վերադառնում հանգստանալու։ Նա իր փոքրիկ սաներին սովորեցրեց կարդալ—գրել, հաշուել և փոքրիկ հետաքրքիր զրոյցներ անել և հին ու նոր կտակարաններից բարոյական, կրօնական և կրթական պատմութիւններ պատմել։

Թովմասը մի ջերմեռանդ և ճշմարիտ քրիստոնեայ էր. Նրա միակ մեծ ուրախութիւնը ս. գիրք կարդալն էր։ Կիրակի օրերը նա գնում էր եկեղեցի, ժողովրդի հետ աղօթում և աստուածային խօսքեր լսում։ Եկեղեցուց յետոյ գնում էր զբօսնելու. Նրա ամենասիրելի զբօսավայրը գերեզմանատունն էր. այնտեղ նա նստում էր իր կնոջ գերեզմանաքարի վերայ և լաց լինում։ Իսկ շաբաթուայ միւս օրերում նա շարունակ պարապում էր երեխաների հետ և պաշտօնական զանազան թղթեր արտագրում։ Հարևանները տեսնելով Թովմասի ույժերից ի վեր աշխատելը ծիծաղում էին վերան և ասում. «ճշմարիտ, որ Թովմասը յիմար է. առաւօտից մինչի երեկոյ անդադար աշխատում է այդ դեռ բաւական, չէ ուրիշների հետ էլ ձրի պարապելով իրան այնպէս բաղդաւոր և երջանիկ է համարում, որ կարծես թէ երկինքը և երկիրը իրան են տուել։ Ճշմարիտ, որ աշխարհիս վերայ շատ անխելք և յիմար մարդիկ կան, որոնք իրանց բաղդաւորութեան մասին չեն մտածում։ Ինքը սոված է և դեռ ուրիշների զաւակներին էլ ձրի դասեր է տալիս, խնամում, պահում...»։

Թովմասը թոյլ էր տալիս մարդկանց խօսելու այնպէս, ինչպէս իրանք են կամենում. և ոչ մի ժամանակ չէր վրդովւում սրա կամ նրա անախորժ և աւելորդ խօսքերը լսելով։

Այսպէս մի կողմից պարոն Նախագահը ապրում էր իր խաղաղ և միայնակ շքեղ բնակարանում, իսկ միւս կողմից գրագրի օգնական խեղճ Թովմասը ապրում էր իւր նեղ և պարզ անշուք խցիկում։ Իսկ թէ այդ երկուսից ո՞վ էր աւելի բաղդաւոր և երջանիկ՝ հարուստ մեծատուն Նախագահը, թէ գրագրի օգնական ծերունի խեղճ Թովմասը այդ թողնում եմ ընթերցողին իմանալու։

Քրիստոսի ծննդեան հրաշալի տօներն էին։ Ամեն կողմն երևում էին ուրախ, զւարթ դէմքեր, նոյն իսկ Նախագահի դիւանատան բոլոր ծառայողները խօսում էին Քրիստոսի գեղեցիկ ծննդեան մասին։ Պատմում էին այն ընծաների մասին, որոնք տալու են իրանց կանանց, երեխաներին, քոյրերին, եղբայրներին, որդկերանց և մօտիկ բարեկամներին։

Բոլորի մէջ միայն Թովմասն էր, որ լուռ և հանդարտ լսում էր նոցա խօսքերը և մտածում թէ ի՞նչպիսի ընծաներ գնի իւր երկու թշուառ աշակերտներին։

Երկար խօսելուց յետոյ, բոլոր ծառայողները թողին իրանց աշխա-

տութեան սեղանները և հեռացան դիւանատնից։ Իսկ ծառայողներից մէկը, որը այդ օրը նախագահի դիւանատանը հերթապահութիւն էր անում, եկաւ Թովմասի մօտ և ասաց. «Սիրելի ընկեր, բարի եղիր, այսօր մի քանի ժամով հերթս կատարել. ցանկանում եմ զաւակներիս, կնոջս համար մի քանի իրեր գնել. դու պսակւած չես, շտապելու կարիք չկայ. քո առնելիքը յետոյ էլ կարող ես...»։ Նա լաւ ճանաչելով ծերունի Թովմասի հոգին, սիրտը և խաղաղ բարեկամական բնաւորութիւնը, առանց տարակուսելու համոզւած էր, որ իր ընկերական խնդիրը սիրով կատարելու է, ուստի առանց Թովմասի պատասխանին սպասելու՝ շտապով գլուխ տուեց, հագաւ իր վերարկուն և դուրս գնաց։ Բարի Թովմասը առանց մի խօսք ասելու նստեց իր աշխատանքի սեղանի մօտ և մեծ եռանդով սկսեց թղթեր արտագրելով զբաղւել։ Կարճ ժամանակից յետոյ թողեց պարապմունքը, մօտեցաւ լուսամուտին և հետաքրքրութեամբ դէպի դուրս նայեց, երգեց ծննդեան գեղեցիկ երգը և ապա ընկաւ խոր մտածմունքի մէջ։ Նախագահն այդ րոպէին դուռը ներս բացելով, հրամայական ձայնով կանչեց. «Ո՛չ ոք չկա՞յ այստեղ»։

Թովմասը նախագահի ձայնը լսելով ցնցւեց ամբողջ մարմնով և պատասխանեց. «Տէր, քո խոնարհ ծառան այստեղ է»։

—Ո՞վ էք դուք. հարցրեց նախագահը.

—«Գրագրի օգնական Թովմասն եմ» եղաւ պատասխանը։

—Ծառայութեան ժամանակը դեռ չի վերջացել և դուք մենա՛կ էք այստեղ. այս ի՞նչ է նշանակում» բարկացած հարցրեց նախագահը։

—«Տէր, բոլոր ծառայողները ամուսնացած մարդիկ լինելով, ժամանակից կէս ժամ առաջ դուրս եկան դիւանատնից և շտապեցին ծննդեան հրապարակը, որպէսզի Քրիստոսի ծննդեան տօնի առթիւ ուտելեղէններ և նւէրներ գնեն իրանց ընտանիքի համար»։

*«*Ծնունդ*»! Նախագահը մի րոպէ անգամ ժամանակ չէր ունեցել մտածելու, որ այսօր Քրիստոսի ծնունդն էր.* ծնունդ *բառը ցնցեց նրան։ Մի թուղթ տւեց Թովմասին որ շուտով և գրի մի ժամւայ մէջ իրան ներկայացնի։ Թովմասը առանց մի րոպէ կորցնելու գնաց նախագահի հրամայած աշխատանքը պատրաստելու, իսկ նախագահը բարկացած, գլուխը թափ տալով, նորից մտաւ իր առանձնասենեակը և ամենայն արագութեամբ զանգահարելով կանչեց իր բարեկամ պառաւ կնոջ և ասաց. «Ես հէնց այս րոպէիս լսեցի, որ այսօր Քրիստոսի ծնունդն է. մտածել ե՞ս արդեօք մեր փոքրիկ Էմիլի մասին. եթէ չես մտածել, գնա և գնիր այնպիսի խաղալիքներ, որոնք նրան կարողանան զւարճութիւն և ուրախութիւն պատճառել։ Բայց աւելի լաւ կլինի, որ երեխային քեզ հետ տանես ծննդեան իրեր վաճառելու հրապարակը և թող ինքը ընտրէ իր խաղալիքները. պառաւը իսկոյն աշխատեց իւր տիրոջ հրամանը կատարել։ Քիչ ժամանակից յետոյ նախագահը իւր ծանր և դժուարին աշխատանքի մէջ նորից մոռացաւ ծննդեան տօնը։ Այդ միջոցին*

Թովմասը նախագահի պատուիրած աշխատանքը նշանակած ժամից առաջ պատրաստած բերեց։

—«Դուք շատ ճշտապահ էք և այդ մի ծառայողի համար ամենալաւ յատկութիւնն է. ասաց բարեկամական քաղցր խօսքերով խիստ և դաժան նախագահը։

—«Տէր, ես դեռ իսկական ծառայող չեմ, այլ միայն գրագրի օգնական» ասաց տխուր ձայնով Թովմասը։

Նախագահը զարմացած հարցրեց. «Ո՞րքան ժամանակից ի վեր»։

—Սկսած 45 տարուց ի վեր». եղաւ պատասխանը։

—Ա՛յդքան երկա՜ր ժամանակ» ասաց նախագահը. «Եւ դուք դեռ մինչև այժմ գրագրի օգնակա՞ն էք. այդ ի՞նչպէս է եղել, պատմեցէք ինձ մանրամասն»։

Խեղճ և թշւառ Թովմասը չիմացաւ թէ ի՞նչ պատասխան տայ. գործի յանցանքը ամբողջապէս ընկնում էր նախագահի վերայ, որ մինչև այժմ ի նկատի չէր առել իւր աշխատասիրութիւնը և հաւատարմութիւնը. ուստի լաւ համարեց լռել։ Աշխատասէր Թոմասի այս լռութիւնը ի նկատի առնելով, նախագահը ուզեց մանրամասն իմանալ թէ ի՞նչու այդ ժրաջան գործունեայ անձը երկար տարիներ նոյն պաշտօնի մէջն է մնացել և շարունակ նոյն չնչին ռոճիկն ստացել։

Կարճ ժամանակից յետոյ, ծերունի նախագահը իւր ծանր աշխատանքի մէջ խեղճ Թովմասին էլ մոռացաւ։ Յանկարծ դուռը բացւեց և պառաւ կինը սարսափած դէմքով ներս մտաւ նախագահի սենեակը և լալով ասաց.

—«Նա գնաց, Տէ՛ր Աստուած, նա գնայ»։ Նախագահը զարմացած հարցրեց. «Ո՞վ գնաց».

—Մեր Էմիլը. պատասխանեց պառաւը «բայց ես մեղաւոր չեմ»։

Նախագահը թուլացած ընկաւ իւր բազկաթոռի մէջ և անհանգիստ կերպով նորից հարցրեց.—«Պատմի՛ր մանրամասն ի՞նչ է պատահել»։

Պառաւը պատասխանեց. «Երբ Էմիլի հետ ծննդեան հրապարակը գնացի, շատ ժողովուրդ էր հաւաքւել. ամեն տեսակ տանջանքներ կրելով հազիւ հազ կարողանում էի Էմիլին հետս տանել և երբ արդէն իրերը գնած՝ կամենում էի տուն վերադառնալ, տեսայ, որ նա այլ ևս չկայ։ Շատ որոնեցի այս ու այն կողմն ընկայ, բայց իզուր. չկարողացայ գտնել»։

Նախագահը սարսափած իսկոյն մի նամակ գրեց ոստիկանապետին և յայտնեց գործի եղելութիւնը. բայց դրանով նա չհանգստացաւ. հագաւ վերարկուն և շտապեց դէպի փողոց, որոնելու իւր փոքրիկ թոռ Էմիլին։

Այդ ժամանակ Թովմասն էլ իւր գործը վերջացնելով, հաւաքեց թղթերը և ծննդեան իրեր վաճառելու հրապարակի միջով անցաւ դէպի իւր բնակարանը։ Այնտեղ փողոցի ծայրում տեսաւ մեծ բազմութիւն

հաւաքւած մի փոքրիկ երեխայի շուրջը։ Երեխան ցրտից կապտած աղիողորմ լալիս էր։ Թովմասը մօտեցաւ հաւաքւած ամբոխին և զարմացած հարցրեց. «Ի՞նչ է պատահել»։ Ամբոխի միջից մէկը պատասխանեց. «Այս խեղճ երեխան կորցրել է իւր ծնողներին»։ «Պէտք է գտնել նրա ծնողներին և երեխան յանձնել նոցա» ասաց Թովմասը։

«Այո՛ անպատճառ պէտք է այդ փոքրիկ խեղճ երեխային տանել իւր հօր և մօր մօտը. վրայ բերեց մի պառաւ կին։

Մի ուրիշը ասաց. «Ի՞նչպիսի լաւ վերարկու և գլխարկ ունի. դա անշուշտ մի յայտնի հարուստ մարդու զաւակ պէտք է լինի։ Ի՞նչ է քո անունը, իմ սիրելի որդի և ո՞րտեղ ես բնակւում»։

Խեղճ երեխան, որ բազմութիւնից վախենում էր և չէր վստահանում ժողովրդին նայել, արտասւելով պատասխանեց պառաւին. «Իմ անունը Էմիլ է»։

Մի ուրիշը հարցրեց. «Ի՞նչ է քո հօր անունը»։

«Մեծ պապ» պատասխանեց երեխան։

Բազմութեան միջից մէկը ձայն տալով ասաց. «Ահա քեզ մի գեղեցիկ պատմութիւն. ո՞վ պէտք է ամբողջ քաղաքը ման գայ և սրա մեծ պապը գտնէ։ Արդեօք մի ոստիկան չկա՞յ այստեղ»։

Այս խօսքերը լսելով, բարի Թովմասը զարմացած բացականչեց. «Մի՞թէ կարելի է թոյլ տալ, որ այս խեղճ մոլորւած երեխային ոստիկանատուն տանեն։ Ես նրան ինձ հետ մեր տունը կը տանեմ մինչև որ տէրը գտնուի։ Ա՛րի ինձ հետ, որդեակ իմ. իմ սենեակը բաւականին տաք է և դու քո սառած մարմինը շուտով կտաքացնես և առաւօտեան լոյսը բացւելուն պէս կըգնամ քո ծնողին կըգտնեմ»։ Թովմասը առանց երկար ժամանակ կորցնելու առաւ երեխային և տարաւ իւր սենեակը։ Սոցա հեռանալուց կէս ժամ յետոյ, ծերունի նախագահը եկաւ նոյն հրապարակը։ Նրա երևալը հրապարակում մեծ իրարանցում ձգեց ժողովրդի մէջ. թէև նա քաղաքացիներից շատերին անձամբ չէր ճանաչում, բայց մարդիկ նրան գիտէին, այդ պատճառաւ մօտեցան և գլուխ տւին։

Ծերունի նախագահը իւր շուրջը եղած մարդկանց ասաց. «Դուք, սիրելի պարոններ, արդեօք մի երեխայի չէ՞ք տեսել որ որոնելիս լինէր իւր առաջնորդող կնոջ»։

—Երևի սա մանկան հայրն է. ասաց մի կին։ Պատասխանը եղաւ. «հայրը չեմ, այլ մեծ պապը. խնդրեմ ասէք ո՞րտեղ է իմ սիրելի Էմիլը։ Արդեօք, դուք, բարի մարդիկ, նրան չէ՞ք տեսել»։

Մի մարդ ճեղքելով ամբոխին եկաւ նախագահի առաջ և վստահութեամբ ասաց. «Տէ՛ր, ձեր խոնարհ ծառան կարող է հաստատ տեղեկութիւն տալ յիշեալ մանկան մասին. արդեօք նա մի մութ գոյնի վերարկու չո՞ւնէր հագին և սպիտակ մորթէ գլխարկ գլխին»։

«Այո՛. բայց ո՞րտեղ է նա» զարմացած հարցրեց նախագահը։

—«Ես կամենում էի այդ մանկանը իմ երեխաների հետ մեր տունը

տանել, երբ մի ուրիշ մարդ առաջ գալով, առաւ նրան և շտապով իւր տունը տարաւ։ Ես ճանաչում եմ այն մարդուն և նրա բնակարանը և եթէ կըցանկանաք, ես ձեզ ուրախութեամբ այնտեղ կառաջնորդեմ։ Տէր, անհանգիստ մի եղէք, գնանք․ ձեր մանուկը մի ազնիւ, առաքինի և բարի մարդու տանն է»։

Բարի Թովմասը Էմիլին իւր տունը բերելով նստեցրեց իւր հին մեծ աթոռի մէջ և մօտեցնելով վառարանին ասաց․ «Դու, սիրելի Էմիլ, այստեղ տաքացիր և մի փոքր հանգստացիր, մինչև ես մեր ԾՆՆԴԵԱՆ սեղանը պատրաստեմ»։ Ծերունի գրագիրը առաջ բերելով տօնածառը, սեղանը ծածկեց սպիտակ ծածկոցով և գեղեցիկ զարդարուած ծառը դրեց նրա վերան, յետոյ բերեց այն մանր մունր ընծաները որոնք գնել էր իւր աշակերտների համար։ Աշակերտները երբ ներս մտան և փոքրիկ Էմիլին տեսան, հետաքրքրութեամբ նայեցին նրա երեսին, իսկ Էմիլն էլ նայում էր օտար և բարի ծերունկին, թէ ինչպէս նա սիրով ամեն բան պատրաստում էր սեղանի վերայ։

Եւ երբ Թովմասը ամեն բան պատրաստեց, եկաւ, երեխաներին հրաւիրեց ԾՆՆԴԵԱՆ սեղանին և ասաց իւր երկու աշակերտներին․ «Սիրելիներ, մենք այսօր մի անսպասելի հիւր ունենք․ այդ պատճառաւ մեր ունեցած խնձորները, ընկոյզները և խաղալիքների երեք մասի բաժանեցի․ յոյս ունեմ, որ դուք չէք նեղանայ, այլ աւելի ուրախ կլինիք, որ մի օտար խեղճ տղայ ձեր բաժնի մի մասը ստանալով ինքն էլ կուրախանայ ձեզ հետ։ Դուք, սիրելի աշակերտներ, բացի մրգերից և խաղալիքներից, ստանալու էք երկու երկու հատ յիշատակարաններ և մատիտներ, իսկ մեր փոքրիկ հիւրը դոցա փոխարէն ստանալու է մի պատկերազարդ գիրք և Քրիստոսի ծննդեան այս սիրուն պատկերը»։

Բարի Թովմասն առաւ Էմիլին իւր գիրկը, ցոյց տուեց բոլոր ընծաները և մի թղթեայ գոմ, որի մէջ կար մի մսուր, իսկ մսուրի մէջ խանձարուրով պատած փոքրիկ Քրիստոսը։ Մարիամը և Յովսէփը նըստած նրա մօտը և մի քանի հովիւներ էլ չոքած նրա առաջը երկրպագութիւն էին տալիս։ Եզն ու էշը և մի քանի ոչխարներ կանգնած մի փոքր հեռու՝ զարմացած նայում էին Նորածին Յիսուս Քրիստոսին։

Փոքրիկ Էմիլը երբ իւր սիրուն ընծան ստացաւ, ուրախացած ծափ տուեց․ իսկ Թովմասի երկու աշակերտները պատմեցին Յիսուսի ծննդեան պատմութիւնը և երգեցին ծննդեան երգը։

Երեխաների ուրախութեան այդ լաւ ժամանակին ներս մտաւ ծերունի նախագահը և փոքրիկ Էմիլին տեսնելով՝ սրտատրոփ ձայն տուեց․ «Էմիլս»։

Երեխան այդ ձայնը լսելուն պէս, իսկոյն ճանաչեց իր պապը և օտար մարդու գրկից իջնելով, վազեց դէպի նա և ուրախացած աղաղակեց․ «մեծ պապ, մեծ պապ»։

Թովմասը իր նախագահին տեսնելով, շփոթուեց․ իսկ վերջինս ձեռքը

մեկնելով ծերունի գրագրին ասաց․ «բարի մարդ, ես շնորհակալ եմ քեզանից, որ ազատեցիր երեխային և բերելով քեզ մօտ խնամեցիր և մինչև անգամ ծննդեան ընծաներ ես պատրաստել նրա համար։ Այդ քո կողմից մեծ բարութիւն և մարդասիրութիւն է․ ասա խնդրեմ, ո՞վ ես դու, և ես ումից պէտք է շնորհակալ լինեմ»։

—«Ո՛վ տէր» ասաց Թովմասը․ «ես միայն իմ պարտքս եմ կատարել, ուրիշ ոչինչ․ ես ձեր դիւանատան ծառայող՝ գրագրի օգնական Թովմասն եմ և մի քանի ժամ առաջ ձեր մեծութեան հրամանով՝ մի թուղթ գրեցի և ձեզ յանձնեցի»։

«Ճշմարիտ, ճշմարիտ» ասաց ծերունի նախագահը․ «ես ձեր ծննդեան ուրախութիւնը կարճացրի իմ սխալողական գործով և ձեզ ստիպեցի նստել ու գրել մի անհրաժեշտ թուղթ։ Պարոն Թովմաս, այժմ յիշում եմ, որ քեզ մի հարց տւի և պատասխանը չըստացայ։ Գուցէ կըկամենայիր այժմ պատասխանել հարցիս․ ասա խնդրեմ, այդ ի՞նչպէս է եղել, որ դու մօտ 45 տարի դեռ գրագրի օգնական ես մնացել»։

Թովմասն այլևս չ'ուզեց առաջւայ նման իզուր ժամանակ կորցնել, սիրտ առաւ և իւր ամբողջ կեանքի պատմութիւնը մանրամասն պատմեց։ Նախագահը Թովմասի պատմութիւնը լսելուց յետոյ, ձեռք տւեց և շնորհակալ լինելով ասաց․ «Ծննդեան տօներից յետոյ յոյս ունեմ, որ միմեանց դարձեալ կըտեսնենք․ այժմ ժամանակ է իմ փոքրիկիս հետ տուն վերադառնալ։ Կրկին շնորհակալ եմ․ ցանկանում եմ քեզ առողջութիւն, բաղդաւորութիւն և երջանիկ օրեր։ Բարի գիշեր, ազնիւ ծերունի Թովմաս»։

Հեռացաւ նախագահը, իսկ Թովմասը կէս ուրախացած և կէս վախեցած կանգնած մնաց։ Այդ միջոցին երկու երեխաների մայրը եկաւ և նոցա տուն տարաւ։ Թովմասը դարձեալ նախագահի դիւանատանը իւր տեղում նստած, շարունակում էր իւր սովորական գործը։ Այդ միջոցին նախագահի ծառան ներս մտաւ և բարձր ձայնով կանչեց․ «Գրագիր Թովմասը այդտե՞ղ է»։ Բոլոր ծառայողներն այդ խօսքերը լսելով, գլուխները բարձրացրին և հետաքրքրութեամբ նայեցին։

«Այստեղ եմ» պատասխանեց Թովմասը։ Ծառան դարձեալ բարձր ձայնով ասաց․ «Պարոն Թովմաս, պարոն նախագահը ինձ հրամայեց ձեզ յայտնել, որ այս երեկոյ ժամի 7-ին շնորհ բերէք թէյ խմելու»։

Պարոն նախագահի կողմից մի այդպիսի հրաւէր դեռ տեղի չէր ունեցել, նա մանաւանդ մի խեղճ գրագրի վերաբերմամբ։ Բոլոր ծառայողները ապշած նայում էին և չէին հաւատում իրանց լսածներին։ Եւ երբ ծառան հեռացաւ, մէկ մէկ եկան Թովմասի մօտ և զարմացած հարցնում էին «ի՞նչու համար է քեզ նախագահը կանչում»։ Խեղճ գրագիրն իւր ամբողջ կեանքի մէջ իւր հետ աշխատող մարդկանցից այնքան բարեկամական խօսքեր չէր լսել, որքան որ լսեց այդ մի քանի ժամւայ ընթացքում։ Մէկն ասում էր․ «Ես սրտով ուրախ եմ այն մեծ պատւի

համար, որ դուք արժանանալու էք պարոն Նախագահից»․ մի ուրիշը ասում էր․ «Մեր ծառայողների մէջ ամենաազնիւ և ճշմարիտը քեզ եմ ճանաչում»․ մի երրորդն ասում էր․ «Ես յոյս ունեմ, որ դուք չէք մոռանայ այն ժամերը և այն անկեղծ յարաբերութիւնը, որ ես դէպ ձեզ ունէի...»։

Ուղիղ նշանակեալ ժամին Թովմասը գնաց Նախագահի մօտ։ Նախագահը բարեկամաբար ընդունելով իր ազնիւ հիւրին ասաց․ «Բարի ծերունի, ես քո վերաբերեալ անարդարութիւն եմ գործել և քեզ վերայ ուշք չըդարձնելով, այսքան երկար տարիներ գրագրի օգնական ես մնացել։ Իմ գործած այդ անարդարութիւնը որքան որ հնարաւոր է, կ՚աշխատեմ շուտով ուղղել։ Դու երկար ժամանակ ծանր աշխատանք ես ունեցել իմ դիւանատանը․ ուստի ժամանակ է քեզ հանգստանալ։ Գնահատելով քո ազնիւ հաւատարիմ ծառայութիւնը, այսօրուանից քեզ տարեկան հինգհարիւր րուբլի կենսաթոշակ եմ նշանակում։ Բացի այդ շնորհում եմ քեզ պատւոյ մի խաչ»։

Ուրախութիւնից ծերունի Թովմասը չափազանց զգացւեց և լաց եղաւ։

Նախագահը մտերմաբար բռնելով Թովմասի ձեռքից, տարաւ սեղարատունը, ուտեղ ճոխ սեղանի վերայ գեղեցիկ․ պայծառ լուսով, զարդարւած դրւած էր ծննդեան տօնածառը, որի մօտ կանգնած փոքրիկ Էմիլը զւարճանում, ուրախանում էր։

Նախագահը ասաց․ «Ով ազնիւ ծերունի, ահա այն փոքրիկ երեխան որին ազատեցիր։ Ես յոյս ունեմ, որ սիրելի Էմիլս քեզ երբէք չի մոռանայ և քեզ մօտ շուտ շուտ գալով՝ ծերութեանդ օրերում կըմխիթարի, կեանքդ կը քաղցրացնի»։

Ժամը 10-ին Թովմասը չափազանց ուրախացած վերադարձաւ իւր տունը, մի կողմ ձգեց հագի վերարկուն, չոքեց գետնին և երկիւղածութեամբ ձեռները վեր բարձրացնելով ասաց․ «Ո՞վ տէր Աստուած, փառք լինի քեզ երկնքում, որ ինձ այս բաղդաւորութեանը հասցրիր։ Տուր ինձ ոյժ, կարողութիւն, որ կարողանամ սրբութեամբ և սիրով կատարել իմ մարդկային պարտքերս դէպի խեղճերը, թշուառները և կարօտեալները»։

Բարի Թովմասը ուրախութեան այդ գեղեցիկ ժամերին մտաբերելով իւր հանգուցեալ կնոջը արտասւելով բացականչեց․ «Ա՜խ, սիրելի Մարիամ, ո՜րքան քաղցր կ՚լինէր ինձ համար եթէ դու այժմ կենդանի լինէիր և քո աչքերով տեսնէիր բաղդաւորութիւնս։ Ցաւում եմ, որ կենդանութեանդ ժամանակ անկարող եղայ քեզ այնպէս պահել, կերակրել, որպէս իմ անկեղծ սիրտն էր ցանկանում։ Ա՜խ, աղքատութեանս տարիների ազնիւ ընկեր, բարձրեալից յաւիտենական հանգիստ է խնդրում քեզ քո ծերունի ընկեր՝ Թովմասը»։

Արշակ Բախանեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ամերիկական թանաքաման.

Վերջերս Ամերիկայում հնարել են մի շատ յարմար թանաքաման։ Ամենից առաջ այդ թանաքամանները մետաղէ խուփ չունեն. ամբողջապէս այնպէս են շինած, որ ո՛չ մի փոշի չի մտնիլ մէջը և թանաքը երբէք չի չորանում։ Մինչև վերջին կաթիլը կը գործածի մարդ և երբէք չի կեղտոտուիլ։ Նրա գլխաւոր յատկութիւններից մէկն էլ այն է, որ թէ թանաքը և թէ գրիչը չէ փչանում շատ երկար ժամանակ։ Արտաքին տեսքով էլ թանաքամանը շատ գեղեցիկ է շինած և ապակուց է։

Գլխարկներ եւ հովանոցներ՝ թղթից:

Մագաղաթէ թղթից այժմ շինում են գլխարկներ, որոնք շատ աւելի լաւ են դիմանում անձրևի, քան յարդէ գլխարկները։ Մինչև իսկ բաժակներ շինում են այդ թղթից։ Շոգի ժամանակ թղթէ այդ գլխարկները շատ զով են պահում, որովհետև տաքութեան վատ հաղորդիչ են։ Բերլինում սկսել են շինել նաև թղթէ հովանոցներ, որոնք ծառայում են միաժամանակ՝ հովահարների տեղ էլ։

Բնակիչների թիւը երկրագնդիս վրայ:

Վերջին տեղեկութիւնների համեմատ, երկրագնդիս բնակիչների թիւն է 1,617 353,000։ *Այդ թիւը բաժանւում է այսպէս.*

Եւրոպայում	390,402,000
Ասիա	909,380,000
Աֆրիկա	170,000,000
Ամերիկա	142,892,000
Աւստրալիա Պօլինեզիա	4,544,000
Բևեռային Բնակիչներ	82,000

Պետութիւնների բնակիչների թիւը այսպէս է.

Ռուսաստան	128,264,000
Գերմանիա	56,367,000
Աւստրիա	45,405,000
Ֆրանսիա	38,962,000
Անգլիա	41,557,000
Իտալիա	32,475,008
Ամերիկա	76,303,000
Հնդկաստան	294,362,000
Չինաստան	426,447,000
Ճապոնիա	46,125,000

Յետոյ գալիս են մանր պետութիւնները որոնք ունին, 2—20 *միլիոն բնակիչ։*

ԶՒԱՐՃԱԼԻՔ

Կարնեցիների հանելուկներից

—

1. Ո՞ւր կ'երթաս, սե՛ւ աղբար:
Քե՞զ ինչ, ծա՛կ գլոխ:

2. Ներս մտայ՝ համբուրեցի,
Դուրս ելայ՝ քարկոծեցի:

3. Առաւօտ ծինւի,
Իրիկուն փլչի:

4. Տղայ մ'ո՛ւնեմ անզգայ,
Կշտանայ՝ կուլայ
Անօթենայ՝ չի լայ:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*
* *

Մի դասի ուսուցիչը հասկացրեց աշակերտներին ի միջի այլոց և այն, որ մարդն էլ կենդանի է, բայց կենդանիներից ամենախելացին և որ շատ գիտնականներ նրան համարում են կապիկներից առաջացած։

Միւս դասին նոյն ուսուցիչն աշակերտներից մէկին հարցնում է.

—Կենդանական ո՞ր ցեղն է ամենախելացին.

Աշակերտը պատասխանում է.

—Կովկասեան ցեղը։

Դասարանը թնդաց աշակերտների ծիծաղից։

Գրիգոր Զաքարեան

Թւերի աշխարհից:

—

12345679×9=111,111,111.
12345679×18=222,222,222.
12345679×27=333,333,333.
12345679×36=444,444,444.
12345679×45=555,555,555.
12345679×54=666,666,666.
12345679×63=777,777,777.
12345679×72=888,888,888.
12345679×81=999,999,999.

Հաղորդեց **Տիկին Թիւրեղ:**

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՂԲԻՒՐԻ ՊՕՍՏԱՐԿՂ

—

Արմաւիր. Օր. Գայիանէին. *Օշականը մեր սրբազան վայրերից մէկն է. այստեղ է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, որ աստուածային շնորհով ստեղծագործել է մեր այբուբէնը։ Ներկայ տարին հայ գրերի գտնելուն և ս. գիրքը հայերէն թարգմանելու* հազար-հինգհարիւր *ամեակն է։ Ինչ կարող էինք աւելի նուիրական ընծայ տալ մեր բաժանորդներին այս տարի, եթէ ոչ հայ սուրբ նահապետ գրագէտների պատկերները. հիմքը V-րդ ոսկէ դարում* Ս. Սահակ Պարթեւ Կաթողիկոսի, Մեսրոպ Մաշտոցի *և այժմ մեր գրականութեան փառք ու պատիւ* Վեհափառ Հայրիկի:

Բագու, Յ. Մ. *Այո, նախատինք այն ծնողին, որի զաւակի ձեռքին* Աղբիւր *չը կայ. բայց յանդիմանելով ոչինչ չի լինի։ Դուք զարմանում էք, որ Բագուցի հայը 3 ր. գլանում է և չէ ստանում* Աղբիւր...

Գանձակ. Մեսրոպին. *Բոլորին էլ ուղարկուել է. սպասում ենք ընդարձակ ցուցակի և զգուշացնում ուշ բաժանորդ գլուղներին, եթէ սկզբի №№-ը չը ստանան։*

Ղարս. Հայ ժողովրդին. *Ձեր քաղաքում միմիայն մի օրինակ* Աղբիւր *է ստացւում. ասացէք, ձեր մանուկները, պատանիները ինչ են կարդում, իսկ դուք ծնողներդ ինչով էք զբաղւած։*

Շուշի Ս.-Տ. «Ներսը մեզ է այրում, դուրսը օտարին». *Ի՞նչ մեծ պատիւներ են անում ձեզ. իսկապէս ձեզ չը ճանաչողը կարող է հաւատալ, որ դուք էլ աշխարհի երեսին կաք... Որքան պատշաճ է գալիս ձեզ՝* «դատարկ տակառի» *առակը։*

Յայտարարութիւն

Զէնապ Բաբիկեանց *(V-րդ դարը Հայաստանում)* Ս. Էջմիածին *և* Միքայէլ Նալբանդեան *մեծադիր երեք պատկերները ճանապարհածախսով 3 ր.։*

Բացուած 1904 թ. բաժանորդագրութիւն

XXII տ. ԱՂԲԻՒՐ XXII տ. եւ XV տ. ՏԱՐԱԶ XV տ.

ԱՄՍԱԳԻՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԼՐԱԳԻՐ

Տարեկան բաժանորդները կստանան

50 №№ Տարազ, Գրական-գեղարուեստական, հասարակական-քննադատական լրագիր:

12 №№ Աղբիւր, Մանուկների եւ պատանիների համար, շատ շքեղ զարդարուած ընտիր նկարներով, պատկերներով:

12 №№ Գեղափնջիկ, Ընտանեկան հանդէս ամսօրեայ:

24 №№ Իլլիւստրասիօն, Երկշաբաթեայ գեղարուեստական-գրական թերթ:

Պրեմիաները որ տրւում են այժմեանից՝

1) Ս. ՍԱՀԱԿ, 2) Ս. ՄԵՍՐՈՊ, 3) ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ, 4) ՁՆԱՇԽԱՐՀԻԿ, էլեկտրօ-ձիթանկար, (Զասկին): Բացի այս պատկերները՝ տարւայ ընթացքում կտրւին իբրև յաւելուածներ Աղբիւրին, ԳԵՂԱՓՆՋԻԿԻՆ 50 լուսատիպ գունաւոր պատկերներ եւ տեսարաններ մեր արքաղան նորական վայրերից:

Աղբիւր-Տարազին աշխատակցում են մեր գրական անուանի ընտիր ոյժերը: ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը՝ 3 ռ. (արտասահման 5 ռ.) ՏԱՐԱԶ 6 ռ. (արտասահմ. 10 ռ.): Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցէով—10 ռ. (արտասահման 18 րուբլի կամ 50 ֆռ.):

Պրեմիաներ, յաւելուածներ, ստանում են միմիայն Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցէով ստորագրողները:

Ապառիկ կամ մաս-մաս վճարող բաժանորդներ չեն ընդունւում: Թիֆլիսում բացի խմբագրատանից (Օլգինսկայեա 33), կարելի է ստորագրել Կենտրոնական և Գուտենբերգ գրավաճառանոցներում: Բաքւում Մ. Ա. Սունդուկեանի «Сотрудникъ» լրագրա-վաճառանոցում:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція АКБЮРЪ կամ ТАРАЗЪ,

Tiflis, (Cancase) Rédaction ACBUR կամ TARAZ.